

# ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈՎԵԼԻՈՐ ԽՈՐՀՈՒՐ

Գ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

(Անդամ Գերագոյն Հոգևոր Խորհրդի)

## ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՍԵՌՈՒ ՄԻՋՆԱԴԱՐՁԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

**Միջնադարյան հայ բանաստեղծության մեջ շարականները բավական մեծ տեղ են գրավում։ Շարականներն իրենց սկզբնավերման շրջանից մինչև ժամանակակից պարզ է դարձել նույնական երգ։**

Հոգևոր երգերն իրենց արվեստով, ձևով ու բովանդակությամբ տարրերը դարերում տարրեր են եղել։ Սրանք մեզ մոտ ծագել են Եղարքում և աստիճանաբար զարգանալով, տարածվել են մտել են ժամակարգության մեջ։

**Սեր հոգևոր երգի առաջին հեղինակները համարվում են Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը։**

**Ս. Սահակի և Ս. Մեսրոպի նախաձեռնությամբ, գրեթե գյուտից հետո, Հայաստանում առաջացավ ազգային կրոնական գրական մի մեծ շարժում։ Նորաստեղծ հայկական գրական լեզուն հանդիսացավ լավագույն միջոց՝ հայ ժողովով կյանքն ու հոգեկան աշխարհը դրսերելու համար։**

Ե դարը միայն թարգմանիչների դարը է։ Այս դարում ապրող ու գործող հեղինակներից շատերը միաժամանակ հոգևոր երգի հեղինակներ են եղել։

Ինչպես շատ ուրիշ քրիստոնյա ազգերի, այնպես էլ մեզ մոտ քրիստոնեության սկզբնական շրջանում կրոնական պաշտամունքի համար առանձին տեղական, ազգային երգեր չկային։ Հոգևոր երգերին այդ

շրջանում նախորդել են սաղմոսների կանոնները։ Այդ սաղմոսներն սկզբում սոսկ ընթերցվում էին՝ թիվ ասվում, բայց հետզհետեւ հարմարվեցին եկեղեցական երաժշտության եղանակներին և սկսեցին երգվել։ Այս արարողությունը կոչվեց սաղմոսերգովթյուն։

Որովհետև երգվող սաղմոսները շատ երկար էին ու միապահաղ, այդ պատճառով ժամերգությունը անհետաքրքրական և ձանձրավի էր գառնում ժամանակու համար։

Ժամանակի ընթացքում եկեղեցական հայրերը, նկատելով ժամերգության այս թերությունները, փորձեցին հոգևոր երգերը հարմարեցնել Ազգային եկեղեցու առանձնահատկություններին և հավատացյալների պահանջներին։

Քրիստոնյա բոլոր ժողովուրդների մոտ էլ հոգևոր երգերի միջոցով արաւահայտվում են ժամանակի մարդու պատկերացումներն ու երեակայությունը, կրոնական գաղափարներն ու հասկացողությունները։

**Սեր բաղմաթիվ ու բովանդակալից շարականները արտացոլում են ազգային, ժողովրդական կյանքը, հատկապես մեր հին հավատը, հեթանոսության շրջանի պատկերացումները՝ արեի, լուսի, ամպի, արևելքի, բարության աղբյուրի, մի խոսքով՝ բնության,**

որի եղերթի և տիեզերական մարմինների մայիս: Այդ են հաստատում մեր Արևագալի արականների քնարական փոքրիկ բաւաստեղծությունները, որ ամեն մի տողի մից երկում է լուսի և արևի պաշտամունքն առ փառաբանումք: Այդպես են նաև «Մեծալուսաց» շարականները, որոնցում գովերգվում առ փառաբանվում է Տիրամայրը՝ բնությունց վերցված գեղեցիկ պատկերներով, մակդիրներով և համեմատություններով:

Մեր հոգևոր երգերի տեսակներն են՝ երգեր, որոնք զիխավորապես կապված են նկեղեցական Տոնացույցի և Օրացույցի մեջ՝ դաժ տերունական տոնների ու սրբերի անվան հետ, որոնք իրենց «կարգո-ու-ով կամ «սարօթն» երգում են այդ տոններին: Հոգևոր երգերի մեջ այս տեսակն ամենաշատն է, որը հետաքայում կոչվել է շարական: Շարականների մեծ մասը բաղկացած է կամ երեք, կամ ինը տոնից: Բոլոր տներն էլ նույն եղանակով են երգում: Այս երգերի երեք տոնից բաղկացած ինելու խորհուրդը Ս. Երրորդությունն է՝ Զայր, Որդի և Ս. Հոգի: Խոկի միենուն եղանակով երգելու իմաստն էլ այն է, որ այդ երեքը կազմում են մի աստվածություն և մի տոնություն:

Մեր արեագալի գեղեցիկ շարականներից շատերի մեջ այս մասին երգվում է.

Երեք անձինք և մի բնութիւն,  
Մի աստուածութիւն.  
Զքիզ խոստովանիմք յաւէտ,  
Սուրբ Երրորդութիւն:

Ն. Շնորհալին իր նշանակոր «Նորաստեղծական»-ի երկրորդ տոնը սկսում է այսպես.

Երեքսրբեան մի տէրութիւն,  
Միով բնութեամբ աստուածութիւն...:

Երգերի այնպիսի մի խումբ էլ կա, որը թիշ առնչություն ունի եկեղեցական արարողության կամ կանոնների հետ: Այդ երգերը կոչվում են տաղեր: Կոմիտասը այսպես է բնորշում դրանց. «Տաղեր» սոցա բովանդակությունը պատկերացնում է պարզ կամ այլաբանորեն Քրիս ոսի տնօրենություններն և սրբերի կյանքի ահատակալության որևէ նշանակոր և ազդեցիկ բովենք<sup>1</sup>:

Հոգևոր երգի մի ուրիշ տեսակն էլ կոչվուց է զանձ<sup>2</sup>: Այս երգերը պարունակում են խնդրվածքներ, որոնք երգվել են եկեղեցում և

եկեղեցուց դուրս: Մրանք մեծ մասամբ արձակ դրվածքներ են:

Գրերի գյուտից և մեր ազգային գրականության հիմքը զնելուց հետո, ժամերգության մեջ ընդունված ու երգվող սաղմոսները հետզհետե փոխարինվում են նոր, փոքրիկ, ազգային հոգմոր երգերով, որի հետևանքով սաղմոսներն աստիճանաբար կրծատվում ու դուրս են մնում ժամերգությունից: Ինչպես մատենագրությունը, համարյա այնպես էլ հայոց հոգևոր երգը Եղարից սկսում է աղայնանալ: Սկզբում հորինվում են փոքրիկ, նոր երգեր, որոնք իրբե հավելված երգվում էին Ս. Գրքի օրհնություններից ու սաղմոսներից հետո: Այս նոր, փոքրիկ հոգևոր երգերը սկզբնական շրջանում կոչվել են կցորդ և դեռ անկախ ու ինքնուրուուն շեն եղել: Այդպես են կոչվել այս երգերը, որովհետեւ երգվել են սաղմոսներից ու օրհնություններից հետո որպես կցորդ, այսինքն՝ Երանց կցված մի մաս:

«Այս նոր երգերը, — ասում է պրոֆ. Ս. Արենյանը, — իրենց նյութին առնում են Աստվածաշնչից, և սաղմոսների ու մարգարեական տարրը որոշում է նրանց ողին: Դրանք հորինվում են նույնիսկ Ս. Գրքի բառերով: Այդպես է եղել հոգևոր երգի ծագումն ու վիճակը Ընդհանուր Եկեղեցու մեջ այն ժամնակ, երբ լինում է հայոց գրերի գյուտը և հիմք է դրվում մեր դրականության»:

Ահա այս կցորդների հիմքի վրա է, որ ժամանակի ընթացքում ծնվում, աճում ու զարդանում են մեր ազգային շարականները: Շարականների զարգանալուց ու ժամակարգության մեջ ընդունվելուց հետո, Հայոց Եկեղեցու ժամերգությունը սկսում է աղայնանալ: Դադարում է սաղմոսներգությունը, որի ութ կանոններին փոխարինում են ութ տեսակ շարականներ՝ ութ ձայնով<sup>3</sup>:

Շարականների կանոնները բաժանված են ութ խմբի՝ «Օրհնութիւն», «Հարց», «Մեծացուցէ», «Աղորումեա», «Տէր յերկնից», «Մանկունք», «Ճաշու» և «Համբարձիւ»:

Մեր ժամերգության արարողությունները, բացի շարականների կանոններից, բաժանված են նաև օրերի ու ժամերի: Այսպես՝ Կիրակի օրը նվիրված է զիխավորապես Քրիստոսի հարությանը.

Բ. 2. (Երկուշարթի) օրը պատկանում է արարշագործությանը և հրեշտականներին:

<sup>1</sup> Մ. Արենյան, «Հայ հին գրականության պատմություն», գիրք Ա, էջ 475.

<sup>2</sup> Այդ ութ ձայներն են՝ ած (առաջին ձայն), ակ (առաջին կողմ), թձ (երկրորդ ձայն), թկ (ավագ կողմ), զձ (երրորդ ձայն), զկ (վառ ձայն), ղձ (չորրորդ ձայն) և ղկ (վերջ ձայն):

Գլ. (երեքշաբթի) օրը հատկացված է մարդաբնիքին.

Դ-2. (Հորեաբարթի) օրը Աստվածածնի օրն է.  
Ե-2. (Հինգշաբարթի) օրը ի պատիվ առաքյալ-  
նեան.

Ուրբաթ օրը ի Ֆիշատակ Քրիստոսի շարչա-  
ռանքի, և Շաբաթը՝ ի պատիվ մարտիրոս-  
ների:

Հայոց նկեղեցու արարողության ժամերն  
են՝ Գիշերային ժամ, Առավոտյան ժամ,  
Արևագալի ժամ, Ճաշու ժամ, Երեկոյան ժամ,  
Խաղաղական ժամ և Հանգստյան ժամ:

Ուրեմն, ամեն մի տոն կամ սովորական օր և արարողության ժամ, ըստ Հայ եկեղեցական կանոնի, ունի համապատասխան շարական կամ շարականների շարք:

Վերոհիշյալ ութ տեսակի շարականները  
ամբողջությամբ վերցրած, Հայոց ծեղեցու  
ժամակարգության մեջ կոչվում են նաև  
«պատկեր», «կանոն» կամ «կարգ», երբեմն  
էլ «օրինարիխին» կամ ուղղակի «երգ»:

Սկսած Ե դարից մինչև ԺԲ դարը, եկեղեցական նշանակոր հայրերը և մեր մատենագիրներն իրենց գործերում, երբ խոսել են շարականների մասին, պատկեր, կանոն կամ կարգ, որինություն և երգ բառերը գործածելիս միշտ նկատի են ունեցել մեր հոգեկոր երգը, շարականները։ Այսպես է եղել մինչև ԺԲ դարը, մինչև շարական բառի գործածությունն ու ուրաքանչակը։

Ալժմ ծանոթանանք մեր բանասերների  
ողմից շարական բառի գործածության և  
որան տրված տարրերը բացատրություններին;

«Շարականն իբրև անդրանիկ խորագիր,—  
դրում է բանասեր Սահակ վարդապետ Ամա-  
ռումին,— առաջին անգամ մեր Շարականի  
նեց երեսում է Հինանց<sup>8</sup> կրօնատ ձեռվ մեկը  
յուսաի ետևից գրված վեց հատ «Գովեա»-նե-  
ի վերաս<sup>9</sup>:

«Անոնդ շարական,— գրում է Հ. Գ. Ավետիքյանը, — Համարեալ էր երբեմն բարդ լիել ի բառիցն շար, և ակն, ական այսինքն՝ ար ազնիւ, իբրև թէ շարական նշանակիցէ ար ականց պատուականաց, այլաբանելով վայելլութիւն երգոյն...»<sup>8</sup>:

Այս բացարության դեմ հենց նույն տեղում առարկում է Հ. Գաբրիել Ավետիքյանը և տալիս է շարական բառի նշանակության մասին իր կարծիքը. «... Վասն որոյ ընտրելի է Համարել ածանցեալ անուն մասնկամքն կան, ի բառէն շար, որ կամ իմանի սովորական

բառն շարք, կարգ, և կամ յերրայականէն  
առեալ շիր կամ շիրան, որ առ նոսա եր  
նշանակէց<sup>9</sup>:

Հ. Գ. Ավետիքյանի այս բացատրությունի  
35 տարի հետո, բանասիր Մ. Էմինը ի  
«Шараканы» богослужебные каноны и  
песни Армянской восточной церкви  
գրքում գրում է. «Եշրական բառի բացա-  
տրությունը մեր կողմէից մանրամասնորեւ-  
տրված է մի ուրիշ տեղ... Այս բառի արմատ  
է շեր—երգ, որն ունի սեմլական ծագում, չա-  
յոց լեզվի մեջ երևուած է XII դարում՝ գործած-  
վելով թե՛ որպես հատուկ, և թե՛ որպես ածա-  
կան անոնք<sup>10</sup>:

Մոտ քամ տարի հետո, 1901 թվականին  
հենվելով Հ. Գ. Ավետիքյանի և էմինի բացա-  
տրությունների վրա, շարական բառի նշանա-  
կության մասին, Դ. Խաչկոնցը «Առամա» ամ-  
սագրում գրում է. «Գալով «շարական» բառը  
նշանակության, մեր հեղեցական մեկնիչնե-  
րը ավելի հճամարեն «Շարականը» բարդված  
ար և ալին բառերե, այսինքն՝ ազնիվ քար-  
երք թե նշանակե «շարականաց պատու-  
կանաց», երգին վայելլությունն այլաբանե-  
ով: Սակայն հայ լեզվի բարդության կանոնն  
ասոր դեմ կելլե, որովհետև ալին իբրև ազնիվ  
քար նշանակիլ, սովորաբար նախադաս  
կդրվի բարդության մեջ, ինչպես ականա-  
կապ, ականագույն և այլն, իսկ որիշ բան  
թե նշանակի, բառն անփոփոխ կմնա, ուղ-  
ղական, ինչպես «մեծակն», «շարակն» և այլն:  
Ասոր համար նախամեծար է «Նարական»  
առեն ածանցված համարել երայական սե-  
մական շիր կամ շիրա բառեն, որ «երգ»  
նշանակե»<sup>11</sup>:

Որ շարական բառն երրայլական ջիր, կա թիւ բառերից չի առաջացել, այլ զուտ հայ-  
ական բառ է՝ զար արմատից և ական վեր-  
ածանցից, Սահմակ վարդապետ Ամատունին  
ուզց է տվել գետես 1894 թվականին «Արա-  
ւա» ամսագրում, «Շարականների ուսում-  
ասիրություն» հոդվածում. «Գալով շարական  
առիս բացատրության, նա կազմված է իսկ  
իսկ «շար» բառից և ածանցված «ական»  
ասնիկով և կազմվել է շարական, որպիսին  
ովորական է մեր լեզվի մեջ. զորօրինակ՝  
որ—զորական, դաս-դաս կան, խումբ-  
մումական և այլն և այլն»<sup>12</sup>.

Վերևում ա ալյս և այլն»;  
Վերևում ասվեց, որ շարական բառը մեր  
ին գրականության և ժամակարգության

<sup>7</sup> «Արարատ», 1894 հունիս, էջ 179:

<sup>8</sup> «Рացատրութիւն շարականառ»: էջ. 8:

ՀԱՅԻ ԽԵՂԱՎՈՐ

<sup>10</sup> М. Эмиль, „Шаракан“, 1879, Москва, Предисловие VI—VII.

<sup>11</sup> «Հումա», 1901, գիրք Ա, էջ 215 (ընդգծումն իմն  
գլ. 2. 1.)

<sup>12</sup> *Муромский вестник*, 1894 г., № 212.

մեջ մինչև ԺԲ դարը գոյություն շի ունեցել: Եթե շարական բառը գոյություն ունենար, ասենք թե՝ զեռևս եղարից, երբ նոր էր սկզբնավորվում մեր հին գրականությունն ու Աղքային Եկեղեցու ժամակարգությունը՝ թարգմանական և ինքնուրպույն ձեերով, երբ Ս. Գրիի, սաղմոսների պղեցությունն ավելի սկատելի և ոժեղ էր մեր նախնական ժամերգության ու ծիսակատարության վրա, էլի մի կերպ համարակոր էր ենթագրել, որ շարական բառը գոյց երրայական ժագում ունենար, մինչդեռ բառի ստուգաբանությունը ցուցյ է տալիս, որ նա հայկական բառարմատ է: Բացի այդ ԺԲ դարում մենք արգեն ունեինք մեր ձևակերպված հարուստ գրական լեզվուն ու գրականությունը: Այդ ժամանակներում Հայոց Եկեղեցին ոչ մի առնչություն չուներ երրայական կամ սեմական գրականության ու լեզվի հետ և չէր կարող վերցնել հիշված շիր կամ շիրա բառարմատը ու գարձնել շարական բառաձնը, ինչպես կարծում են Հ. Գ. Ավետիքյանը, Էմինը և Խաչկոնցը: Իր «Հայոց լեզվի պատմության» 2-րդ գրքի ԺԴ գլխում լեզվաբան Հ. Աճառյանը, խոսելով երրայական փոխառությունների մասին, ասում է: «Մեր ժամանակության պատմությունն ընդհանրապես ընդունում է, որ Հայերին Ս. Գիրը նախ՝ ասորերենից և հետո՝ հոնարենից է թարգմանված և ոչ թե երրայեցերենից... Եվ եթե այսպես է, պետք է հետեւնել, որ մեր նախնիք իրենց ուսման ծրագրի մեջ չէին առած երրայեցերենը. և հետեւարաց երրայեցերենը նաև գրական նախապարհով ուղղակի ազդեցուրյուն չունի հայերենի վրա»<sup>15</sup>:

Թարգմանական շրջանում հայերենի մեջ Ս. Գրիի և երրայական գրականության միջոցով մտած բառերի ընդհանուր կումարը պրոֆ. Աճառյանը հաշվում է 138, որոնցից շատ դորժածական են՝ ալլուխա, ամէն, բելիար, դարիր, գենեն, յորելեան, յորելեար, ուարի և այլն: Այս բոլոր բառերն անցել են մեր լեզվի մեջ հավանաբար Ս. Գրիի թարգմանության ժամանակ, ուր ոչ մի նիշատակություն չկա «շիր» կամ «շիրա» բառերի երրայական լինելու մասին:

Քանի որ թարգմանական շրջանում և հետագայում, մինչև ԺԲ դարը, ոչ մի հիշատակություն չկա այդ «շիր» կամ «շիրա» բառերի մասին, դրա համար էլ Մ. Էմինը ենթադրում է, որ այդ բառը անցել է հայերենին ԺԲ դարից: Բայց այդպիսի փոխառում, այն էլ ԺԲ դարում, հնարավոր չէր:

<sup>15</sup> Հ. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 2-րդ մաս, ԺԴ գլխում, էջ 59, 61, 62 (ընդգծումն իմն է—Գ. Հ.):

«Եթե մեսօրովյան ծաղկալ շրջանումն հայերը երրայերեն չէին սովորում, — եղրակացնում է Հ. Աճառյանը, — հավանական չէ, որ նաջորդ դարերում սովորեին: Հուենական փոխառությունների նման երրայական բառերն իւ հայերեն լեզվի մեջ մարմին ստացած ձեւուն չեն: Նրանցից հազիվ 15 հատը սովորական լեզվի մեջ մատեն են, որոնցից 6 հատը նաև արդի ժողովրդական լեզվի մեջ»<sup>16</sup>:

Ունենալով հայկական ժագում, շարական բառը մեր չին և արդի գրական լեզվի մեջ գործածվել է և գործածվում է սովորաբար երեք առումով:

Նախ շարական ասելով հասկանում ենք մի գործ, եկեղեցական մի երգ, մի բանաստեղծություն, ինչպես ասենք՝ Ն. Շնորհալու «Նորահրաշ պատկանոր» շարականը, Վահան Գողթինցուն նվիրված «Զարմանալի է ինձ» շարականը և այլն:

Ապա՝ շարական նշանակում է նաև երգերի շարք. օրինակ՝ ութ ձայն շարական, երկու կանոն շարական և այլն:

Եվ վերջապես՝ շարական նշանակում է դիրք, երգերի ժողովածու, մեր Շարական գիրքը, որը Շարականոց էլ է կոչվում:

Այժմ քննենք այն հարցը, թե մեր բանասիրության մեջ ինչպես է բացատրվել այդ շարականների ծագումը, զարգացումը, տարածումն ու դադարումը:

Հայկական շարականների ուսումնասիրության ընագավառում խոշոր աշխատանք է կատարել մեծ գիտական Մ. Արեգյանը, ձիշտ է, նրանից տարիներ առաջ Մ. Էմինը (1879), Սահակ վարդապետ Ամատունին (1894), Գավիթ Խաչկոնցը (1901), Ն. Տեր-Միքայելյանը (1905) մեր շարականների մասին գրել են արժեքավոր ուսումնասիրություններ, բայց դրանցից և ոչ մեկը չունի պրոֆ. Մ. Արեգյանի ուսումնասիրության խորությունն ու բազմակողմանիությունը Շարականների մասին Մ. Արեգյանի հոգածածաշարն առաջին անգամ լույս է տեսել 1912 թվականի «Արարատ» ամսագրի 7—12 համարներում: Իր ուսումնասիրության մեջ, գերախտաբար, Մ. Արեգյանը քննադատություն շի ենթարկել ու հերքել Գ. Խաչկոնցի և Ն. Տեր-Միքայելյանի սխալ տեսակետները մեր շարականների ծագման, սկզբնավորման վերաբերյալ: Նա այդ շի արել ո՞ւ 1912 թվականին ե ոչ էլ իր «Հայոց հին գրականության պատմության» Ա. գրքի «Հոգևոր երգ» գլխում, որը համարյա Արարատ» ամսագրում լույս տեսած հոգածածաշարի ամրոգությունն է:

Որո՞նք են Գ. Խաչկոնցի և Ն. Տեր-Միքայելյանի սխալ մեկնարանությունները մեր

<sup>16</sup> Կույն տեղում, էջ 62 (ընդգծումն իմն է—Գ. Հ.):

հոգևոր երգի կամ շարականների առաջացման ժամանակի մասին։ Քննենք դրանք։

Բանասեր Դ. Խաչկոնցը 1901 թվականին «Հումա» ամսագրում «Հայոց կրոնական բանաստեղծությունը» իր հոդվածը այսպես է սկսում։ «Մեր հին մատենագրությունը, շատ թիւ բացառությամբ, զուտ կրոնական է։ և մեր նախնիքը ընդհանուր գիծերու մեջ բոլորովին կրոնական հասարակություն մ'էին իրենց եկեղեցիով։ Սա ինքինքն իրու ազգային Հայ եկեղեցի շեշտել տվակ Զ դարու կիսուն։ Այսուհետեւ է, որ կունենանք մեր տարեն ու կրօնական բանաստեղծությունը»<sup>15</sup>։

Ուրեմն մեր հոգևոր երգը՝ շարականները սկսվում են վեցերրդ դարի երկրորդ կեսից կամ «այսուհետեւ», ինչպես ասված է։ Ապա Դ. Խաչկոնցը գտնում է, որ Ս. Սահակը և Ս. Մեսրոպը շարականների և դրանց եղանակների առաջին հեղինակները չեն կարող լինել։

Մեր շարականների սկզբնավորման ու ժամանակի վերաբերյալ հենց այսպիսի մի կարծիք է Հայտնում է շանասեր Ն. Տեր-Միքայիլյանը։ Հայկական շարականների վերաբերյալ գերմաններն դրած իր ուսումնասիրության մեջ, հենվելով այն փաստի վրա, որ Հովհանն Օձնեցին ժամանակության միակերպության գործը ձեռնարկելիս իր գրվածքներից հատկապես «Յաղագս կարգագությունը» և մյուսների մեջ չի խոսում կցորդների կամ շարականների կարգավորման և միակերպության մասին, Ն. Տեր-Միքայիլյանը նկարակցնում է, որ Օձնեցու ժամանակի, այսինքն Հ դարում, դեռ չեն եղել հոգերունոր երգեր, կամ սաղմոսների նմանողություններ»<sup>16</sup>։

Ուրեմն, ըստ Ն. Տեր-Միքայիլյանի, մեր շարականներն սկսվում են Հ դարից հետո։

Այս երկու բանասերների վերոհիշյալ սխալ, չհիմնավորված տեսակետները հերքելու համար, խոսքը տառնք մեր պատմագիրներին։

Հազկերտի հրամանի համաձայն, քրիստոնյա ազգերի ներկայացուցիչները երբ Ե դարում իրենց այրուծիկով հավաքվում են Պարսկաստան և արքունիքի առաջ լուսմ են Հազկերտի բերանից հավատափոխության մասին, թե «Հարցէք, քննեցէք, տեսէք, թող որ լաւն է, ընտրեալ կալցուր», այստեղ բրիստոնյա ամբոխը, ասում է Եղիշեն, «սկսան այսուհետեւ բարձր բարբառով սաղմոսիւք և երգօֆ հոգելորօֆ և մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին պաշտօն ցուցանել և աներկիւլ առանց զան-

<sup>15</sup> «Հումա», 1901, գիրք Ա, էջ 209 (ընդգումն իմն է-Գ. Հ.):

<sup>16</sup> N. Տեր-Միքայիլ Հ. «Տառապահի Հայոց», Պատմութեամբ, Leipzig, 1905, էջ 61.

գիտելոյ, ո ոք և երթայր առ նոսա ուսուցանէին կամակար...»<sup>17</sup>։

Այս մեջբերումը ցուց է տալիս, որ մեր եկեղեցում Ե գարում, բացի սաղմոսներությունից, արդեն գոյություն են ունեցել հոգեր այսինքն շարականները։

Դազար Փարպեցին պատմում է, որ Ս. Սահակի կողմից Աստվածաշունչը թարգմանվելուց և դպրոցներ բաց անելուց հետո մարդկանց բազմությունը, «... որք շահեալք մ' հոգեր օգտիւ՝ ընթանային ինդալիցք ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն, արձակաւթիւրաքանչիւր ի տունս, մեծամեծք և տղայք, սաղմոսնելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս, ի հրապարակս և ի փողոցս և առտինն»<sup>18</sup>։

Կցորդը, ինչպես արդեն ասված է, ճշանակում է հոգելոր երգ՝ շարական։ Ուրեմն Ի Փարպեցու վկայությամբ հաստատվում է, որ մենք Ե գարում ունեցել ենք հոգեր կրգատարբեր սաղմոսներությունից, որովհետև ասված է «սաղմոսնելով և կցորդս ասելով»։

Կիրակոս Գանձակեցին, Պատ և Աթանագինս եղբայրների անվայել և արատավոր կինցաղի մասին խոսելին, թե ինչպես նրանք եկեղեցին ու առաքինի գործերը թողած, ուտելով, հարբելով և անառակ կանանց հետ էին ժամանակ անցկացնում, պատմում է. «Իսկ նորա թողեալ զգործ եկեղեցույց, ուտելով և ըմպելով պարապեալք և փոխանակ սաղմոսից և երգոց հոգելորաց, գուսանօք վարձակօք և բողիւք շատանային»<sup>19</sup>։

Դարձեալ Կ. Գանձակեցին, թվելով Ե դարի մեր թարգմանիշների և մատենագիրների բազմաբեղուն գրական գործունեալությունը, խոսելով հատկապես բազմատեսակ հոգերի մասին, գրում է. «Արարին և երգս շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւալ և մեծ խորհրդով Ծննդեանն քրիստոսի և Քառասունօրեայ գալստեանն ի Տաճարն, Մկրտութեանն և Եկատորութեանն ի Բեթանիա և յերրուալէմ, Մեծի շաբաթուն շարշարանաց և Յարութեանն, Համբարձմանն և Հոգու գալստեանն, Խաչի և Եղիշենաց, և սըրոց ամենեցուն, պապաշէս և զանազանն և անթիւս, որ մինչև յալոր պաշտի յԵկեղեցի Հայաստանեաց...»<sup>20</sup>։

<sup>17</sup> Եղիշէ, «Պատմութիւն Վարդանանց», Թիֆլիս, 1913, էջ 23:

<sup>18</sup> Ղ. Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», գրվադ Ա. Թիֆլիս, էջ 35—36.

<sup>19</sup> Կ. Գանձակեցի, «Պատմութիւն», Թիֆլիս, 1909, էջ 23:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 32:

Այստեղ արդեն ոչ միայն Յ գարում հոգեոր բրդերի գոյությունն է հաստատվում, այլև յն, որ հայկական հոգեոր Երզը այդ ժամանակի բավականին զարգացած է եղել և այդ արդեն ժամակարգության մեջ ընտունված են եղել վերեռում հիշված տոների անոնավոր շարականները:

Հենց ինքը Հովհան Օձնեցին, որի գործերի ըրա հիմնվելով Ն. Տեր-Միքայելյանը փորձել ժխտել մեր շարականների գոյությունը ինչև լ դարը, իր գրվածքներով հերթում է Միքայելյանի տեսակետը: Այսպես, օրինակ, այլոց Եկեղեցին միշտ էլ Քրիստոսի Սննդյան Մկրտության տոները միասին, միևնույն է կատարում Հունվարի 6-ին: Սակայն ձձնեցու ժամանակ պատահում էր, որ ոմանք Պննդյան տոնը կատարում էին, բայց Հայությության՝ այսինքն Մկրտության տոնը աշքա- Փող էին անում: Այդպիսի կարգազնցներից ողոքելով ու դժողհելով իր «Ատենաբանութեան» մեջ, այդ առթիվ Օձնեցին ասում է. Ճ: Ե: Ր. աղազաւ և կցուրդս գեղեցկանուազս Ամերանութեան բանից յօրինեցին Երանելիքն Եր վարդապետք<sup>21</sup>:

Այստեղ հասկանալի է, որ Օձնեցին «Երանելի վարդապետք» ասելով ակնարկում է Յ դարի գրողներին ու թարգմանիչներին: Հովհան Օձնեցու խոսքն այստեղ վերաբերում է Քրիստոսի Սննդյան և Մկրտության տոների

շարականներին, որոնք մեր հոգեոր երգերի մեջ ամենահինն են և վերագրվում են Ս. Սահակին, Ս. Մեսրոպին ու Մ. Խորենացուն:

Թվում է, թե վերեռում բերված փաստերը արդեն բավական են ցուց տալու, որ Դ. Խաչկոնցի և Ն. Տեր-Միքայելյանի տեսակետները մեր շարականների առաջացման ժամանակի վերաբերյալ անհիմն են ու սխալ:

Մեր, ինչպես ընդհանուր հին գրականության, այնպես էլ Հոգեոր երգի անդրանիկ հեղինակներն ու բանաստեղծները հանդիսանում են Ս. Սահակին ու Ս. Մեսրոպը՝ իրենց աշակերտներով: Նրանք էին, որ իրենց գրչով առաջին անգամ Հայ ժողովրդի համար հորինեցին զիր ու գրականություն, Հայացված Եկեղեցի և Եկեղեցկան երաժշտություն ու բանաստեղծություն: Պարզ է ուրեմն, որ Ե դարում մեր ազգային գրականության հետ մեկտեղ հիմնվել ու զարգացել է նաև հոգեոր Երզը, շարականը:

Սահակ-Մեսրոպյան շրջանի պատվավոր գործը շարունակեցին և զարգացրին, ավելի ինքնուրույն ու ազգային դարձրին նրանց աշակերտները, այնպես որ սկսվելով և արագ զարգանալով Ե դարում, հետազո դարերին հանձնվեց հոգեոր բանաստեղծության մի պատկառելի ճյուղ՝ շարականների տեսակը:

Այսքանը շարականների առաջացման և ժամանակի մասին:

(Շարունակելի)

<sup>21</sup> Յովհան Օձնեցի, «Ատենաբանութիւն», լ. 12: